ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ
Բաժնետերերի ընդհանուր ժողովի 22.06.2026թ.-ի
թիվ 2 արձանագրությամբ
Խմբագրություն թիվ 2

ՅՈՒՆԻԲԱՆԿ

ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՎԱՐՄԱՆ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3
ԳԼՈՒԽ 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ 3
ԳԼՈՒԽ 3. ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ 4
ԳԼՈՒԽ 4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՀԵՌԱԿԱ ԿԱՐԳՈՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ (ՀԱՐՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ) ԸՆԴՈՒՆՎՈՂ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ 5
ԳԼՈՒԽ 5. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ 6
ԳԼՈՒԽ 6. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԿԱՐԳԸ 6
ԳԼՈՒԽ 7. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ 7
ԳԼՈՒԽ 8. ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 9
ԳԼՈՒԽ 9. ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ 10
ԳԼՈՒԽ 10. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ 10
ԳԼՈՒԽ 11. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՔՎՈՐՈՒՄԸ 10
ԳԼՈՒԽ 12. ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ 11
ԳԼՈՒԽ 13. ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԸ 11
ԳԼՈՒԽ 14. ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ 12
ԳԼՈՒԽ 15. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 12
ԳԼՈՒԽ 16. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 12
ԳԼՈՒԽ 17. ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ 13
ԳԼՈՒԽ 18. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ 14
ԳԼՈՒԽ 19. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ 14

ՆՊԱՏԱԿԸ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ «Բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կանոնակարգ»-ի (այսուհետ՝ Կանոնակարգ) նպատակն է Կորպորատիվ կառավարման կանոնագրքի և գործող օրենսդրության համատեքստում սահմանել «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ (այսուհետ՝ Բանկ) բաժնետերերի ընդհանուր ժողովի (այսուհետ նաև՝ Ժողով կամ Ընդհանուր ժողով) նախապատրաստման և վարման կարգը:

ԿԻՐԱՌՄԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

Սույն կանոնակարգը կիրառվում է Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի, Խորհրդի նախագահի, Խորհրդի անդամների, Վարչության նախագահի, քարտուղարի և շահագրգիռ այլ ստորաբաժանումների կողմից:

ԱՌՆՉՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ՀՀ էկոնոմիկայի նախարարի 30.07.2024թ. հաստատած «Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագիրքը հաստատելու մասին» հրաման	1955-Ն
«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՀ օրենք	ՀՕ-68
«Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենք	ՀՕ-232
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 16.04.2013թ. հաստատած «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4	102-Ն որոշում
«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ կանոնադրություն	ՀՀՏ 01

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կորպորատիվ կառավարման կանոնագիրք՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարի կողմից հաստատված «Հայաստանի Հանրապետության կորպորատիվ կառավարման կանոնագիրք»-ը:

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Ժողովը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է:

1.2. Բանկը պարտավոր է տարին առնվազն մեկ անգամ գումարել բաժնետերերի տարեկան Ընդհանուր ժողով: Տարեկան Ընդհանուր ժողովը գումարվում է ֆինանսական տարվա ավարտից հետո երկուսից վեց ամսվա ընթացքում:

1.3. Տարեկան Ընդհանուր ժողովից բացի գումարվող Ժողովները համարվում են արտահերթ, որոնք հրավիրվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

1.4. Բաժնետերերի ցուցակի կազմման և Ժողովի անցկացման տարին, ամիսը, ամսաթիվը, մասնակիցներին ծանուցման կարգը, տրամադրվող նյութերի ցանկը սահմանում է Բանկի Խորհուրդը՝ օրենսդրության և սույն կանոնակարգի պահանջներին համապատասխան:

ԳԼՈՒԽ 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ

2.1. Գործող օրենսդրության պահանջների համաձայն, Ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում հետևյալ հարցերը՝

1) Բանկի կանոնադրության հաստատումը, դրանում փոփոխությունների և լրացումների կատարումը,

2) Բանկի վերակազմակերպումը,

3) Բանկի լուծարումը,

4) ամփոփ, միջանկյալ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը, լուծարային հանձնաժողովի նշանակումը,

5) Խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը:

6) Ընդ որում՝ Բանկի Խորհրդի քանակական կազմի հաստատման և դրա անդամների ընտրության հարցերը քննարկվում են բացառապես տարեկան Ընդհանուր ժողովում: Բանկի Խորհրդի անդամների ընտրության հարցն արտահերթ Ընդհանուր ժողովում կարող է քննարկվել, եթե վերջինս որոշում է ընդունել Խորհրդի կամ նրա առանձին անդամների լիազորությունների վաղաժամկետ դադարեցման մասին,

7) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը,

8) Խորհրդի ներկայացմամբ Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի հաստատումը,

9) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը: Տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը,

10) Ընդհանուր ժողովի վարման կարգի հաստատումը, հաշվիչ հանձնաժողովի ձևավորումը,

11) Բանկի բաժնետոմսերի համախմբումն ու բաժանումը,

12) ՀՀ օրենքով նախատեսված դեպքերում բաժնետոմսերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չկիրառելու մասին որոշման ընդունումը,

13) օրենքով սահմանված դեպքերում՝ Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 50 տոկոսից ավելին կազմող գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքումը, ինչպես նաև 25-50 տոկոս գործարքների դեպքում, եթե Խորհուրդը հարցը ներկայացրել է Ժողովի հաստատմանը,

14) հաստատված օրակարգի շրջանակում ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ հարցեր:

ԳԼՈՒԽ 3. ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

3.1. Սույն կանոնակարգի 2.1 կետով սահմանված հարցերի վերաբերյալ Ժողովի որոշումներն ընդունվում են Ժողովին մասնակցող բաժնետերերի ձայների պարզ մեծամասնությամբ, բացառությամբ սույն կանոնակարգի 2.1 կետի 1-ից 4-րդ, 6-րդ, 7-րդ և 13-րդ ենթակետերով սահմանված հարցերի, որոնց վերաբերյալ որոշումներն ընդունվում են Ժողովի կողմից՝ Ժողովին մասնակցող ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 3/4-ով: Ընդ որում՝ 3-րդ ենթակետի հարցի վերաբերյալ պետք է քվեարկեն ոչ պակաս, քան քվեարկող բաժնետոմսերի սեփականատերերի ձայների 2/3-ը:

3.2. Սույն կանոնակարգի 2.1 կետի 2-րդ, 11-ից 14-րդ ենթակետերի հարցերով որոշումներն ընդունում է Ժողովը՝ միայն Խորհրդի ներկայացմամբ:

3.3. Ժողովի վարման կարգի մասին որոշումներն ընդունվում են Ժողովի կողմից հաստատված սույն կանոնակարգի պահանջների համաձայն:

3.4. Ժողովը գործում է հաստատված օրակարգի համաձայն և չի քննարկում իր իրավասությանը չվերաբերող հարցեր:

3.5. Բանկի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի բոլոր սեփականատերերի կամ անվանատերերի միաձայն ընդունած որոշումները չեն կարող անվավեր ճանաչվել «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 68-ի 12-րդ կետի հիմքերով:

3.6. Ժողովի ընդունած որոշումների մասին տեղեկությունները, ինչպես նաև քվեարկության արդյունքները հայտարարվում են հաշվիչ հանձնաժողովի կողմից Ժողովի ընթացքում՝ օրենքով տրամադրված քվեաթերթիկների ամփոփման արդյունքների համաձայն:

3.7. Բանկի բաժնետերն իրավունք ունի դատական կարգով բողոքարկել օրենսդրության խախտմամբ Ժողովի ընդունած որոշումները, սակայն դատարանն իրավունք ունի ուժի մեջ թողնել Ժողովի որոշումը, եթե թույլ տրված խախտումները էական չեն և այդ բաժնետիրոջ քվեարկության մասնակցելը չէր կարող ազդել քվեարկության արդյունքների վրա:

ԳԼՈՒԽ 4. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՀԵՌԱԿԱ ԿԱՐԳՈՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՄԲ (ՀԱՐՑՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ) ԸՆԴՈՒՆՎՈՂ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4.1. Մասնակիցների մասնակցությունն ու ներգրավվածությունը հեշտացնելու, մասնակցության ծախսերը նվազեցնելու ու ժամանակը խնայելու նպատակով Ընդհանուր Ժողովի որոշումները կարող են ընդունվել հեռակա քվեարկության (հարցման միջոցով), բացառությամբ սույն կանոնակարգի 4.2 կետով սահմանված դեպքերի: Հեռակա քվեարկության (հարցման միջոցով) ժողովները պետք է անցկացվեն բոլոր մասնակիցների համար տեղեկատվության հավասար հասանելիության և մասնակցության հնարավորությունների ապահովմամբ:

4.2. Տարեկան ժողովը և սույն կանոնակարգի 2.1 կետի 2-րդ, 3-րդ, 9-րդ ենթակետերի հարցերի (Բանկի վերակազմակերպումը, Բանկի լուծարումը, Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը) վերաբերյալ հրավիրված արտահերթ Ժողովները չեն կարող անցկացվել հեռակա կարգով (հարցման միջոցով):

4.3. Ժողովի նիստը չի համարվում հեռակա (հարցման) կարգով անցկացված, եթե նիստի ժամանակ Ընդհանուր ժողովի մասնակիցները կարող են հաղորդակցվել միմյանց հետ հեռախոսային, հեռուստակապի կամ այլ կապի միջոցով՝ իրական ժամանակի ռեժիմում: Այդպիսի նիստում ընդունված որոշումները չեն համարվում հեռակա քվեարկության (հարցման) միջոցով ընդունված:

4.4. Հեռակա կարգով քվեարկությամբ ընդունված Ժողովի որոշումն օրինական ուժ ունի, եթե քվեարկությանը մասնակցել են ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատերերի կեսից ավելին:

4.5. Հեռակա կարգով քվեարկությունը կատարվում է սույն կանոնակարգի 13-րդ Գլխում նշված քվեաթերթիկների օգտագործմամբ, որոնք պետք է տրամադրվեն բաժնետերերին լրացրած քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունումն ավարտելու պահից առնվազն 30 օր առաջ: Էլեկտրոնային, հեռատիպային կամ հեռախոսային կապի միջոցներով ժողովի անցկացման քվեարկության դեպքում քվեաթերթիկները (այդ թվում՝ էլեկտրոնային քվեաթերթիկները) պետք է տրամադրվեն բաժնետերերին Ժողովի անցկացման պահից առնվազն 7 օր առաջ:

4.6. Բանկը ցուցաբերում է պատշաճ զգուշավորություն, որպեսզի Բանկի բաժնետերերի համատեղ ներկայությամբ Ժողովների համեմատությամբ հեռակա կարգով քվեարկությամբ (հարցման միջոցով) Ժողովները չնվազեցնեն բաժնետերերի՝ Խորհրդի և Վարչության անդամների հետ հաղորդակցվելու և հարցեր տալու հնարավորությունը:

4.7. Անկախ Ժողովի հրավիրման և քվեարկության կարգից՝ բաժնետերերի ձայներին տրվում է հավասար նշանակություն:

ԳԼՈՒԽ 5. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

5.1. Բանկի Խորհուրդը որոշում է՝

1) Ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամն ու վայրը,

2) Ժողովի օրակարգը,

3) Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը,

4) Ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցելու կարգը, մամուլի միջոցը,

5) Ժողովի նախապատրաստման համար բաժնետերերին տրամադրվող տեղեկությունների և նյութերի ցանկը,

6) Ժողովի անցկացման քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը, եթե քվեարկություն-ները կատարվելու են քվեաթերթիկներով:

5.2. Բանկի Վարչությունը որոշում է Ժողովի կազմակերպման և անցկացման հետ կապված անհրաժեշտ կազմակերպչական միջոցառումները:

ԳԼՈՒԽ 6. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՎ ԿԱՐԳԸ

6.1. Բանկը պարտավոր է ապահովել հավասար և արդարացի վերաբերմունք նույն տեսակի (դասի) բոլոր բաժնետոմսերի սեփականատերերի նկատմամբ՝ նրանց կողմից Բանկի կառավար-մանը մասնակցելու ու քվեարկելու իրենց իրավունքներն արդյունավետ իրականացնելու, Ընդհանուր ժողովի օրակարգում ներառված հարցերի վերաբերյալ հիմնավորված դիրքորոշում ձևավորելու և տեղեկացված որոշում կայացնելու համար:

6.2. Բաժնետերը պետք է ողջամիտ ժամկետներում բավարար և արդիական տեղեկատվություն ստանա Ընդհանուր ժողովի անցկացման ամսաթվի, վայրի, ձևաչափի և օրակարգի մասին, ինչպես նաև հնարավորություն ունենա ծանոթանալ Ընդհանուր ժողովում քննարկվելիք որոշումների նախագծերին, փաստաթղթերին և անհրաժեշտ այլ տեղեկատվությանը:

6.3. Ընդհանուր ժողովի հրավիրման վայրն ու օրը (ժամը) չպետք է սահմանափակեն Ընդհանուր ժողովում մասնակցի մասնակցությունը:

6.4. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեն.

1) Բանկի տեղաբաշխված բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերը՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն քվեարկության իրավունքով, ինչպես նաև անվանատերերը (հիմնավորող փաստաթղթերի ներկայացման դեպքում),

2) Բանկի բաժնետեր չհանդիսացող Խորհրդի և Վարչության անդամները՝ խորհրդակցական ձայնի իրավունքով,

3) Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանման անդամները՝ որպես դիտորդ,

4) Բանկի արտաքին աուդիտն իրականացրած անձը՝ որպես դիտորդ (եթե նրա եզրակացությունն առկա է գումարվող Ընդհանուր ժողովի օրակարգի հարցերում),

5) ՀՀ կենտրոնական բանկի ներկայացուցիչները՝ որպես դիտորդ,

6) տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները՝ որպես դիտորդ,

7) Բանկի այլ աշխատակիցները՝ իրենց կողմից Ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը զեկուցելու համար,

8) Ժողովի օրակարգում ընդգրկված որոշակի հարցերի վերաբերյալ մասնագիտական գիտելիքներին տիրապետող անձինք:

6.5. Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմվում է պատասխանատու ստորաբաժանման կողմից՝ Բանկի ռեեստրի տվյալների հիման վրա (ամենամյա ռեեստր և հետագա ստացված պաշտոնական տեղեկանքներ), Բանկի Խորհրդի կողմից սահմանված տարվա, ամսվա, ամսաթվի դրությամբ: Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք

ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը պետք է միաժամանակ բավարարեն հետևյալ երկու պահանջները.

ա. այն չպետք է նախորդի Ընդհանուր ժողով գումարելու մասին որոշումն ընդունելու օրվան,

բ. ցուցակը կազմելու օրվա և Ընդհանուր ժողովի անցկացման օրվա միջև ընկած ժամանակահատվածը չի կարող 45 օրից ավելի լինել:

6.6. Եթե Ընդհանուր ժողովը գումարվում է հեռակա քվեարկությամբ, ապա դրան մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը սահմանվում են Ընդհանուր ժողովի գումարման ամսաթվից առնվազն 35 օր շուտ:

6.7. Բաժնետոմսերի անվանատերը պարտավոր է, ցուցակը կազմելու համար, այն կազմելու տարով, ամսով, ամսաթվով տվյալներ տրամադրել այն անձանց մասին, որոնց շահերը ներկայացնելու նպատակով նա տնօրինում է բաժնետոմսերը:

6.8. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող Բանկի բաժնետերերի ցուցակում նշվում են տվյալներ յուրաքանչյուր մասնակցի անվան (անվանման), գտնվելու (բնակության) վայրի և նրան պատկանող բաժնետոմսերի քանակի մասին:

6.9. Բանկի բաժնետերերի ցուցակը ծանոթացման նպատակով պետք է տրամադրվի Բանկի այն բաժնետերերին, որոնք գրանցված են Բանկի բաժնետերերի ռեեստրում: Բանկը, բաժնետիրոջ պահանջով, կարող է տալ տեղեկանք՝ ցուցակում նրա ընդգրկման մասին:

6.10. Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակում փոփոխություններ կարող են կատարվել միայն ցուցակի կազմման ընթացքում թույլ տրված սխալներն ուղղելու կամ դրանում չընդգրկված Բանկի բաժնետերերի խախտված իրավունքները և օրինական շահերը վերականգնելու նպատակով:

ԳԼՈՒԽ 7. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ԾԱՆՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

7.1. Բանկի բաժնետերերը և Ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող այլ անձինք Ընդհանուր ժողովի գումարման մասին ծանուցվում են պատվիրված նամակ ուղարկելու կամ առձեռն հանձնելու կամ էլեկտրոնային փոստի հասցեով ծանուցելու միջոցով: Ընդհանուր ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցումը հրապարակվում է Բանկի պաշտոնական կայքում, azdarar.am կայքում և մամուլում:

7.2. Ընդհանուր ժողովի գումարման մասին բաժնետերերին ծանուցելու ժամկետները սահմանվում են Բանկի կանոնադրությամբ:

7.3. Ընդհանուր ժողովների անցկացման մասին ՀՀ կենտրոնական բանկը գրավոր ծանուցվում է ոչ ուշ, քան դրանց անցկացումից 15 օր առաջ:

7.4. Ընդհանուր ժողովի մասին ծանուցումը ներառում է՝

1) Բանկի ֆիրմային անվանումը և գտնվելու վայրը.

2) Ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.

3) Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարին, ամիսը, ամսաթիվը.

4) Ժողովի օրակարգում ընդգրկված հարցերը.

5) բաժնետերերի ծանոթանալու կարգը Ժողովում քննարկվող հարցերին վերաբերող տեղեկություններին և նյութերին, որոնք պետք է ներկայացվեն բաժնետերերին Ժողովը նախապատրաստելու ընթացքում:

7.5. Տարեկան ժողովը նախապատրաստելու ընթացքում բաժնետերերին ներկայացվելիք տեղեկությունները և նյութերը ներառում են.

1) Բանկի տարեկան հաշվետվությունը.

2) Բանկի տարեկան ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի եզրակացությունը.

3) տեղեկություններ Բանկի Խորհրդի անդամների առաջադրվող թեկնածությունների վերաբերյալ, հետևյալ բնույթի.

ա. անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան ամսաթիվը.

բ. մասնագիտությունը և կրթությունը.

գ. վերջին 10 տարվա ընթացքում զբաղեցրած պաշտոնները.

դ. տվյալ պաշտոնում ընտրվելու (նշանակվելու) ամսաթիվը և պաշտոնից ազատվելու ամսաթիվը.

ե. տվյալ պաշտոնում վերընտրվելու (վերանշանակվելու) քանակը.

զ. նրանց և նրա հետ փոխկապակցված անձանց պատկանող Բանկի քվեարկող բաժնետոմսերի քանակը.

է. տեղեկություններ այն իրավաբանական անձանց մասին, որոնցում տվյալ անձը զբաղեցնում է ղեկավար պաշտոններ.

ը. փոխհարաբերությունների բնույթը տվյալ Բանկի և Բանկի հետ կապված անձանց հետ:

4) տեղեկություններ հաշվիչ հանձնաժողովի առաջադրվող թեկնածությունների մասին.

5) Բանկի կանոնադրության փոփոխությունների և լրացումների նախագիծը կամ նախագիծը նոր խմբագրությամբ.

6) օրակարգում ընդգրկված հարցերի հետ կապված այլ նյութեր.

7) տեղեկացում քվեարկության եղանակի մասին.

8) քվեաթերթիկը, եթե քվեարկությունները կատարվելու են քվեաթերթիկների միջոցով.

9) օրենսդրությամբ սահմանված այլ նյութեր (բաժնետերերի միավորման պայմանագրի պատճենը, առաջարկվող Խորհրդի անդամի մասին, փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի Խորհրդում առաջարկվող մասնակցի մասին (հեռակա քվեարկության դեպքում)):

7.6. Ընդհանուր ժողովի ծանուցումն ու Ընդհանուր ժողովում քննարկվող տեղեկությունների և նյութերի տրամադրումը պետք է հնարավորություն ընձեռեն մասնակցին Ընդհանուր ժողովին նախապատրաստվել պատշաճ կերպով և կայացնել տեղեկացված որոշումներ:

7.7. Բանկի կանոնադրական կապիտալում 10 տոկոս մասնակցություն կազմելու նպատակով միավորված բաժնետերերի խմբի ստեղծման պայմանագիրը պետք է տրամադրվի Բանկին սույն կանոնակարգի 7.5 կետի նյութերի կազմում Ժողովի բոլոր մասնակիցներին դրա պատճենները տրամադրելու համար՝ Ժողովի կայացման, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ լրացված քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու համար սահմանված վերջնաժամկետից առնվազն 30 օր առաջ: Ընդ որում՝ բաժնետերերի խմբի ստեղծման պայմանագիրը պետք է պարունակի հետևյալ պայմաններն ու տեղեկությունները.

1) Բանկի միավորվող բաժնետերերի վերաբերյալ տվյալներ, ներառյալ՝ նրանց պատկանող Բանկի տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի քանակը,

2) միավորվող բաժնետերերի կողմից առաջարկվող Խորհրդի անդամի թեկնածուի վերաբերյալ.

ա. անուն, ազգանուն, հայրանուն, ծննդյան ամսաթիվը,

բ. մասնագիտությունը և կրթությունը,

գ. վերջին 10 տարվա ընթացքում զբաղեցրած պաշտոնները,

դ. նրան և նրա հետ փոխկապակցված անձանց պատկանող Բանկի քվեարկող բաժնետոմսերի քանակը,

ե. տեղեկություններ այն իրավաբանական անձանց մասին, որոնցում տվյալ անձը զբաղեցնում է ղեկավար պաշտոններ,

զ. փոխհարաբերությունների բնույթը Բանկի և Բանկի հետ կապված անձանց հետ,

3) պայման այն մասին, որ պայմանագիրը կնքվում է առնվազն մեկ տարի ժամկետով և մինչև այդ ժամկետի ավարտը փոփոխման կամ լուծման ենթակա չէ.

4) միավորվող բաժնետերերի հայեցողությամբ՝ այլ տվյալներ:

7.8. Բանկի կանոնադրական հիմնադրամում փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի ներկայացուցչի մասին տեղեկատվությունը, կազմված սույն կանոնակարգի 7.7 կետի 2-րդ ենթակետի համաձայն, պետք է տրամադրվեն Բանկին սույն կանոնակարգի 7.5 կետի նյութերի կազմում Ժողովի բոլոր մասնակիցներին դրա պատճենները տրամադրելու համար՝ Ժողովի կայացման, իսկ հեռակա կարգով քվեարկության դեպքում՝ լրացված քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունելու համար սահմանված ժամկետի վերջին օրվանից առնվազն 30 օր առաջ: Տարեկան ընդհանուր ժողովում փոքր բաժնետերերի ընդգրկումը Խորհրդի կազմում կատարվում է ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ սահմանված կարգով:

7.9. Ընդհանուր ժողովը հեռակա քվեարկությամբ գումարելիս նույնպես, բաժնետերերին, քվեաթերթիկների և Ժողովի օրակարգի հետ մեկտեղ տրամադրվում են անհրաժեշտ տեղեկությունները և նյութերը:

7.10. Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ներկա գտնվել Ժողովին՝ առանց քվեարկությանը մասնակցելու:

7.11. Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերը Ժողովի գումարման մասին ծանուցվում են սույն կանոնակարգի 7.1 և 7.2 կետերին համապատասխան:

7.12. Արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերին տրամադրվող նյութերի ցանկը չի ընդգրկում քվեաթերթիկ, բացառությամբ այն դեպքերի, եթե Ժողովին նախատեսվում է քննարկել և քվեարկության դնել հետևյալ հարցերը.

1) Բանկի վերակազմակերպման հարցեր,

2) Բանկի լուծարման հարցեր,

3) Բանկի կանոնադրության մեջ այնպիսի փոփոխություն կատարելու մասին հարցեր, որի հետևանքով սահմանափակվում են արտոնյալ բաժնետոմսերի սեփականատերերի իրավունք-ները:

7.13. Սույն կանոնակարգի 7.12 կետով սահմանված հարցերի վերաբերյալ Ժողովում քվեարկելու դեպքում Բանկի մեկ արտոնյալ բաժնետոմսը դրա սեփականատիրոջը տալիս է մեկ ձայնի իրավունք:

ԳԼՈՒԽ 8. ԺՈՂՈՎԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1. Բանկի բաժնետոմսերի առնվազն 2 տոկոսի ձայնի իրավունք ունեցող սեփականատերը, Բանկի ֆինանսական տարվա ավարտից 30 օրվա ընթացքում իրավունք ունի երկուսից ոչ ավելի առաջարկություններ ներկայացնել Ժողովի օրակարգի վերաբերյալ, ինչպես նաև առաջարկել Բանկի Խորհրդի անդամության թեկնածուներ, ընդ որում՝ առաջարկվող թեկնածուների քանակը չի կարող գերազանցել այդ մարմնում անդամների սահմանված քանակը:

8.2. Տարեկան ժողովի օրակարգի վերաբերյալ առաջարկությունները ներկայացվում են գրավոր՝ նշելով հարցի առաջարկման հիմքերը, հարցն առաջադրող բաժնետիրոջ անվանումը (անուն-ազգանունը), նրան պատկանող բաժնետոմսերի քանակը:

8.3. Բանկի Խորհրդի անդամության թեկնածուի վերաբերյալ առաջարկություններ ներկայաց-նելիս, նշվում են սույն կանոնակարգի 7.7 կետի 2-րդ ենթակետով պահանջվող տվյալները:

8.4. Բանկի Խորհուրդը քննարկում է ներկայացված առաջարկները և որոշում ընդունում սույն կանոնակարգի 8.1 կետում նշված ժամկետը լրանալուն հաջորդող 15 օրվա ընթացքում:

8.5. Մերժման վերաբերյալ որոշում կարող է ընդունվել, եթե՝

1) առաջարկ ներկայացրած բաժնետիրոջ կողմից խախտվել է սույն կանոնակարգի 8.1 կետում նշված 30-օրյա ժամկետը,

2) առաջարկ ներկայացրած բաժնետերը չի տնօրինում առնվազն 2 տոկոս ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի քանակը,

3) թեկնածուների վերաբերյալ առաջարկությունները չեն պարունակում սահմանված անհրաժեշտ տվյալները,

4) առաջարկը չի համապատասխանում գործող օրենսդրությանը:

8.6. Բանկի Խորհրդի հիմնավորված մերժման որոշումը ուղղվում է առաջարկ ներկայացրած բաժնետիրոջը՝ որոշումն ընդունելու պահից երեք օրվա ընթացքում: Մերժման մասին որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ԳԼՈՒԽ 9. ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

9.1. Ժողովի անցկացման համար ստեղծվում է հաշվիչ հանձնաժողով, որի քանակական կազմը, լիազորությունների ժամկետը և անդամները հաստատվում են Ժողովի որոշմամբ՝ Բանկի Խորհրդի ներկայացմամբ:

9.2. Տարեկան ժողովի որոշմամբ ընտրված հաշվիչ հանձնաժողովը, սահմանած լիազորությունների ժամկետներում իրականացնում է իր գործառույթները, այդ թվում՝ արտահերթ Ժողովների հրավիրման և անցկացման, ինչպես նաև փոքր մասնակցություն ունեցող բաժնետերերի ներկայացուցչի ընտրության համար լրացված առաջարկների ամփոփման հետ կապված:

9.3. Հաշվիչ հանձնաժողովի կազմը պետք է բաղկացած լինի առնվազն 3 (երեք) անդամից՝ բացառելով հաշվիչ հանձնաժողովի կազմում Բանկի Խորհրդի անդամների, Վարչության նախագահի և Վարչության անդամների ընդգրկումը:

9.4. Հաշվիչ հանձնաժողովը որոշում է Ժողովի քվորումը, բաժնետերերին և նրանց ներկայացուցիչներին բացատրություններ է տալիս Ժողովում օրակարգի հարցերի քվեարկման կարգի վերաբերյալ, ապահովում է քվեարկության սահմանված կարգը և բաժնետերերի՝ քվեարկությանը մասնակցելու իրավունքը, իրականացնում է ձայների հաշվարկը, ամփոփում է քվեարկության արդյունքները, դրանց վերաբերյալ կազմում է արձանագրություն, այն ներկայացնում է Ժողովին և Բանկի արխիվ է փոխանցում քվեաթերթիկները:

ԳԼՈՒԽ 10. ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ

10.1. Բանկի բաժնետերը ժողովում մասնակցելու իր իրավունքը կարող է իրականացնել անձամբ կամ լիազորված ներկայացուցչի միջոցով:

10.2. Բաժնետիրոջ ներկայացուցիչը կարող է մասնակցել Ժողովին միայն լիազորագրի առկայության դեպքում: Բանկի բաժնետեր հանդիսացող իրավաբանական անձանց ղեկավարները, Ժողովին ներկայանում են առանց լիազորագրի: Լիազորագրերը ձևակերպվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

10.3. Եթե բաժնետոմսերը փոխանցվել են Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելուց հետո մինչև Ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ապա նշված ցուցակում ընդգրկված բաժնետերը պարտավոր է իրենից բաժնետոմսեր ստացած անձին տրամադրել քվեարկելու լիազորագիր կամ Ընդհանուր ժողովում քվեարկել նոր սեփականատիրոջ ցուցումների համաձայն:

ԳԼՈՒԽ 11. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՔՎՈՐՈՒՄԸ

11.1. Ընդհանուր ժողովն իրավասու է, եթե դրա մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել են ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 50-ից ավելի տոկոսին տիրապետող

բաժնետերերը: Եթե Ժողովը տևում է մեկ օրից ավելի, ապա յուրաքանչյուր օրվա համար կազմվում է մասնակիցների գրանցման առանձին ցուցակ:

11.2. Քվորումի հաշվարկման և քվեարկության արդյունքների ամփոփման համար հաշվի են առնվում նաև Ժողովի մասնակիցների գրանցման ավարտի պահին ստացված քվեաթերթիկներով տրամադրվող ձայները:

11.3. Քվորումի բացակայության դեպքում հայտարարվում է նոր Ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը: Նոր Ժողովի գումարման դեպքում օրակարգի փոփոխություն չի թույլատրվում: Նոր Ժողովն իրավասու է, եթե մասնակիցների գրանցման ավարտի պահին գրանցվել է ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 30 տոկոսից ավելին: Բանկի բաժնետերերի ծանուցումը նոր Ընդհանուր Ժողովի գումարման մասին կատարվում է սահմանված կարգով՝ Ժողովի գումարման ամսաթվից առնվազն 10 օր առաջ:

11.4. Եթե քվորումի բացակայության պատճառով չկայացած Ժողովի գումարման ամսաթիվը տեղափոխվում է 20 օրից պակաս ժամկետով, ապա այդ Ժողովին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի նոր ցուցակ չի կազմվում:

ԳԼՈՒԽ 12. ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՄ

12.1. Քվեարկությունն իրականացվում է «մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն» սկզբունքով, բացառությամբ Խորհրդի անդամների ընտրության և օրենքով նախատեսված այլ դեպքերի, երբ կիրառվում է գումարային (կումուլյատիվ) քվեարկության սկզբունքը:

12.2. Բանկի տարեկան կամ արտահերթ ժողովների անցկացման ժամանակ քվեարկությունը կարող է անցկացնել էլեկտրոնային եղանակով՝ Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայի Էլեկտրոնային հեռահար քվեարկության համակարգի միջոցով:

12.3. Ընդհանուր ժողովի գործընթացները, ձևաչափը և ընթացակարգերը պետք է ապահովեն հավասար վերաբերմունք բոլոր բաժնետերերի նկատմամբ: Բաժնետերը պետք է տեղեկացված լինի Ընդհանուր ժողովի վարման կանոններին և ընթացակարգերին, այդ թվում՝ քվեարկության ընթացակարգերին:

ԳԼՈՒԽ 13. ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐԸ

13.1. «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի հոդված 79-ի պահանջների համաձայն Բանկի Ընդհանուր ժողովների քվեարկությունը կատարվում է քվեաթերթիկների միջոցով:

13.2. Քվեաթերթիկների ձևը և բովանդակությունը հաստատվում է Բանկի Խորհրդի կողմից:

13.3. Քվեաթերթիկները տրամադրվում են բաժնետերերին սույն կանոնակարգի 7.1 կետի համաձայն: Քվորումի հաշվարկման և քվեարկության արդյունքների ամփոփման համար հաշվի են առնվում մինչև Ժողովի մասնակիցների գրանցման ավարտը ստացված քվեաթերթիկներով տրամադրվող ձայները:

13.4. Քվեաթերթիկների տրամադրումը հավաստվում է Բանկի բաժնետերերին քվեաթերթիկների և Ժողովի նյութերի տրման (առաքման)՝ սահմանված ձևի գրանցամատյանով:

13.5. Քվեաթերթիկը պարունակում է հետևյալ տեղեկությունները.

1) Բանկի ֆիրմային անվանումը,
2) Ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը,
3) քվեարկության դրվող յուրաքանչյուր հարցի ձևակերպումը և նրա քննարկման հերթականությունը,
4) քվեարկության դրված յուրաքանչյուր հարցի վերաբերյալ քվեարկության տարբերակներ «կողմ», «դեմ» և «ձեռնպահ», իսկ գումարային (կումուլյատիվ) քվեարկության դեպքում՝ ձայների քանակը,

5) լրացված քվեաթերթիկն ընդունելու տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը, եթե բաժնետերը քվեարկում է հեռակա կարգով,

6) ցուցում այն մասին, որ քվեաթերթիկը պետք է ստորագրվի բաժնետիրոջ կողմից,

7) քվեաթերթիկը լրացնելու կարգի պարզաբանումը:

13.6. Բանկի Խորհրդի ընտրության դեպքում քվեաթերթիկում նշվում է թեկնածուների ազգանունը, անունը, ինչպես նաև անհատականացնող այլ տվյալներ:

ԳԼՈՒԽ 14. ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐՈՎ ԿԱՏԱՐՎՈՂ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

14.1. Քվեաթերթիկներով քվեարկման դեպքում հաշվառվում են ձայներն այն հարցերի վերաբերյալ, որտեղ քվեարկողի կողմից թողնված է քվեարկման միայն մեկ տարբերակ: Նշված պահանջի խախտմամբ լրացված քվեաթերթիկները համարվում են անվավեր և ձայների հաշվառման ժամանակ հաշվի չեն առնվում: Գումարային (կումուլյատիվ) քվեարկության դեպքում հարցի վերաբերյալ քվեարկությունը համարվում է անվավեր, եթե թույլ է տրվել ձայների բաշխման մաթեմատիկական սխալ:

14.2. Եթե քվեաթերթիկը բովանդակում է քվեարկության դրված մի քանի հարցեր, նշված պահանջի խախտումը մեկ կամ մի քանի հարցի նկատմամբ չի բերում ամբողջ քվեաթերթիկի անվավեր ճանաչմանը:

ԳԼՈՒԽ 15. ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

15.1. Հաշվիչ հանձնաժողովի կողմից քվեարկության արդյունքների վերաբերյալ Ժողովի կայացման ամսաթվով կազմվում է արձանագրություն, որը ստորագրվում է հաշվիչ հանձնաժողովի անդամների կողմից:

15.2. Արձանագրությունը կազմելուց և ստորագրելուց անմիջապես հետո քվեաթերթիկները զմռսվում և հանձնվում են Բանկի արխիվ՝ պահպանության համար: Քվեարկության արդյունքների մասին արձանագրությունը կցվում է Ընդհանուր ժողովի արձանագրությանը:

15.3. Քվեարկության արդյունքները բաժնետերերին հայտարարվում են Ընդհանուր ժողովի ընթացքում:

15.4. Բանկի բաժնետերերն իրավունք ունեն ծանոթանալ քվեարկությունների արդյունքների վերաբերյալ արձանագրություններին:

ԳԼՈՒԽ 16. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

16.1. Ընդհանուր ժողովի արձանագրությունը կազմվում է հայերեն և ռուսերեն, թղթային եղանակով՝ մեկ փաստաթուղթ կազմելու միջոցով, երկու օրինակից՝ Ժողովի ավարտից 5 օրվա ընթացքում, որոնք ստորագրում են Ժողովի նախագահը և քարտուղարը: Ժողովի նախագահը պատասխանատվություն է կրում Ժողովի արձանագրությունում առկա տեղեկությունների հավաստիության համար:

16.2. Արձանագրության մեջ նշվում են՝

ա. Ընդհանուր ժողովի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը և վայրը.

բ. Բանկի՝ տեղաբաշխված քվեարկող բաժնետոմսերի ձայների գումարային քանակը.

գ. Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովին մասնակցած բաժնետերերին պատկանող ձայների գումարային քանակը.

դ. Ժողովի նախագահը (նախագահությունը) և քարտուղարը (քարտուղարությունը), Ժողովի օրակարգը:

16.3. Արձանագրությունը բովանդակում է Ժողովում կայացած ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերը, այդ հարցերի վերաբերյալ քվեարկության արդյունքները, Ժողովի կողմից ընդունված որոշումները:

16.4. Բանկի բաժնետերերն իրավունք ունեն ծանոթանալ Ժողովի արձանագրություններին:

16.5. Ժողովի արձանագրությունները և դրանց հավելվածները պահպանվում են թղթային և էլեկտրոնային եղանակներով, իսկ նյութերը՝ էլեկտրոնային եղանակով, դրանց համար նախատեսված սահմանափակ հասանելիությամբ հատուկ թղթապանակում՝ Բանկի ֆայլային սերվերի վրա:

16.6. Արձանագրությունների, դրանց հավելվածների և նյութերի պահպանության համար պատասխանատու է Ժողովի քարտուղարը:

ԳԼՈՒԽ 17. ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

17.1. Բանկի արտահերթ Ընդհանուր ժողովները գումարվում են Բանկի Խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, Վարչության, Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Բանկի առնվազն 10 տոկոս ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերի պահանջով:

17.2. Արտահերթ Ընդհանուր ժողովի գումարման վերաբերյալ Բանկի Խորհրդի որոշմամբ սահմանվում է Ընդհանուր ժողովի գումարման ձևը՝ բաժնետերերի համատեղ ներկայությամբ կամ հեռակա կարգով քվեարկության միջոցով:

17.3. Բանկի Խորհուրդը չի կարող իր որոշմամբ փոխել Ժողովի գումարման ձևը, եթե վերը նշված անձանց արտահերթ Ընդհանուր ժողովի գումարման մասին ներկայացրած պահանջը ցուցում է բովանդակում բաժնետերերի արտահերթ Ընդհանուր ժողովի գումարման ձևի մասին:

17.4. Արտահերթ Ընդհանուր ժողովի՝ հեռակա կարգով քվեարկությամբ գումարման մասին Բանկի Խորհրդի որոշումը սահմանում է՝

ա. քվեաթերթիկի ձևն ու բովանդակությունը.

բ. բաժնետերերին քվեաթերթիկների և տրամադրվող տեղեկությունները ու նյութերը առաքելու տարին, ամիսը, ամսաթիվը.

գ. բաժնետերերի կողմից լրացված քվեաթերթիկները Բանկի կողմից ընդունման վերջին ժամկետի տարին, ամիսը, ամսաթիվը:

17.5. Բանկի Վարչության, Բանկի աուդիտն իրականացնող անձի կամ պահանջը ներկայացնելու դրությամբ Բանկի առնվազն 10 տոկոս ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերի պահանջի առկայության դեպքում, Բանկի Խորհուրդը պետք է արտահերթ Ընդհանուր ժողով գումարի պահանջը ներկայացնելու պահից 45 օրվա ընթացքում:

17.6. Արտահերթ Ընդհանուր ժողովի գումարման մասին ներկայացրած պահանջում պետք է ձևակերպված լինեն այն հարցերը, որոնք առաջարկվում է ընդգրկել Ժողովի օրակարգում և դրանց քննարկման անհրաժեշտության հիմնավորումը:

17.7. Բանկի Խորհուրդն իրավունք չունի փոփոխություններ կատարել ոչ առաջարկվող օրակարգի, ոչ քննարկմանը ներկայացվող հարցերի ձևակերպումների մեջ, բացառությամբ այն դեպքերի, երբ առաջարկվող օրակարգի հարցերը չեն հանդիսանում Ընդհանուր ժողովի իրավասության առարկա՝ Օրենքով նախատեսված դեպքերում:

17.8. Եթե արտահերթ Ժողովի գումարման պահանջը առաջադրվում է 10 տոկոս ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի սեփականատեր հանդիսացող բաժնետերերի կողմից, ապա այն

պետք է բովանդակի պահանջը ներկայացնողի անունը, ազգանունը (անվանումը), նրան պատկանող բաժնետոմսերի քանակը, ստորագրությունը:

17.9. Արտահերթ Ընդհանուր ժողովի գումարման կամ մերժելու մասին Բանկի Խորհրդի որոշումը պետք է ընդունվի պահանջը ներկայացնելու ամսաթվից 10 օրվա ընթացքում:

17.10. Արտահերթ Ժողովի մերժման մասին որոշումն ընդունվում է այն դեպքում, երբ՝

ա. խախտվել է արտահերթ Ժողովի գումարման պահանջի ներկայացման կարգը.

բ. պահանջ ներկայացնող բաժնետերը չի տնօրինում 10 տոկոս ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի քանակը.

գ. արտահերթ Ժողովի գումարման պահանջով առաջադրված հարցը ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ Ժողովի որոշման իրավասության ներքո չէ:

17.11. Արտահերթ Ընդհանուր ժողովի գումարման կամ մերժման մասին Խորհրդի որոշումն ուղղվում է պահանջը ներկայացրած անձանց որոշման ընդունման պահից՝ եռօրյա ժամկետում և կարող է բողոքարկվել դատական կարգով:

17.12. Եթե սահմանված ժամկետում Բանկի Խորհուրդը արտահերթ Ժողովի գումարման մասին որոշում չի ընդունում կամ մերժում է, ապա Ժողովը կարող է գումարվել պահանջը ներկայացրած անձանց կողմից: Այդ դեպքում արտահերթ Ժողովը կարող է որոշում ընդունել փոխհատուցելու Ժողովի գումարման հետ կապված ծախսերը Բանկի միջոցների հաշվին: Նշված կարգով գումարված արտահերթ ժողովը կարող է քննարկել և որոշում ընդունել միայն այն հարցերի շուրջ, որոնք ՀՀ օրենսդրությամբ և Բանկի կանոնադրությամբ սահմանվել են որպես Ընդհանուր ժողովի իրավասության առարկա:

ԳԼՈՒԽ 18. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

18.1. Բանկն ապահովում է, որ Ընդհանուր ժողովի ընթացքում բաժնետերը հնարավորություն ունենա հարցեր տալ Խորհրդի և Վարչության անդամներին, ինչպես նաև արտաքին աուդիտորին, եթե դրա եզրակացությունն առկա է Ընդհանուր ժողովի նյութերում: Ընդհանուր ժողովում հարցերին պատասխանելու անհնարինության դեպքում դրանց պատասխանը բաժնետիրոջը պետք է ուղարկվի գրավոր ձևով և մյուս բաժնետերերին հասանելի դարձնելու նպատակով տեղադրվի Բանկի համացանցային էջում, բացառությամբ գաղտնի տեղեկությունների: Պատասխանի հասանելիությունը բաժնետերերին ապահովելու համար Բանկը կարող է կիրառել նաև տեղեկատ-վության տրամադրման այլ միջոցներ:

18.2. Ընդհանուր ժողովի ընթացքում բաժնետերերը պետք է հնարավորություն ունենան հաղորդակցվել միմյանց հետ, եթե դա անհրաժեշտ է քվեարկության դրված հարցի վերաբերյալ որոշում կայացնելու կամ հարցի էությունը պարզաբանելու համար:

ԳԼՈՒԽ 19. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

19.1. Գործող օրենսդրությունում, Բանկի կանոնադրությունում և Կորպորատիվ կառավարման կանոնագրքում փոփոխություններ կատարելու դեպքում մինչև սույն կանոնակարգում համապա-տասխան փոփոխություններ կատարելը, Խորհուրդը ղեկավարվում է օրենսդրության, Բանկի կանոնադրության և Կորպորատիվ կառավարման կանոնագրքի փոփոխված դրույթներով:

19.2. Սույն կանոնակարգի սեփականատեր է հանդիսանում Կորպորատիվ կառավարման և նախագծերի ներդրման դեպարտամենտը:

19.3. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունիսի 22-ից:

19.4. Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած է ճանաչվում Բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից 2025 թվականի հոկտեմբերի 23-ին հաստատված Բաժնետերերի ընդհանուր ժողովի նախապատրաստման և վարման կանոնակարգը՝ REG 01.1:

ՀԱՍՏԱՏԵՑ
Բաժնետերերի ընդհանուր ժողովը **Ընդհանուր ժողովը նախագահող** **Գ. Զաքարյան** **22.06.2026թ.**

ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐ
Կորպորատիվ կառավարման և նախագծերի ներդրման դեպարտամենտի տնօրեն **Ս. Իրիցյան**